

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*

Պատրմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

agmenaraksyan@mail.ru

«ԲԱՇՄԱՎԵԴԸ»՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՀԱՆԴԵՍ

Բանալի բառեր՝ Սուլբ Ղազարի վանք, Գաբրիել Այվազովսկի, Ղևոնդ Ալիշան, Բազմավեպի խմբագիրներ, Մխիթարյան միաբանություն, Մխիթարյան հրատարակություններ, հոգևոր հայրենիք:

Ներածություն

Հայ ժողովրդի հոգևոր մշակույթի, գիտության և մամովի գործիչների մի զգայի մասը դարեր շարունակ գործունեություն է ծավալել հայունիքի հեռու՝ օտար ափերում: Հատկապես ակնառու է Վատիկանում՝ Սուլբ Ղազար կղզում հաստատված հայ մտավորականների գործունեության արդյունքը: XVIII դարի սկզբներից հայազգի մի խումբ հոգևոր գործիչներ հաստատվելով այստեղ, իրենց ուժերի անմնացորդ նվիրումով ծառայեցին հայագիտությանը և հայապահպանության անչափ կարևոր գործին: Նպատակն էր բարեկիրթ և ուսումնական ազգերից հետ չմնալը, համայն հայության հոգևոր և մշակութային վերելքին նպաստելը: Մեր ժողովրդի հոգևոր ու բարոյական արժանապատվությունն իրենց մեջ մարմնավորող այրերը՝ Մխիթարյան միաբանության հիմնադիրներն ու անդամները, նաև մամովի միջոցով փորձեցին նպաստել համագգային, հայրենասիրական գաղափարների տարածմանն ու արմատավորմանը հայության լայն զանգվաճների շրջանում: Այդ նպատակով հիմնադրված «Բազմավեպը» իր «բովանդակության հարստության, համազգային գաղափարների արծարծման, նաև բարձրարվեստ ու նրբաճաշակ տպագրության շնորհիվ լայն ընդունելության է արժանացել հայկական բոլոր գաղթավայրերում: Ասացինն է հայոց մեջ մարմնավորել ժողովրդանվեր լրագրության գաղափարը»¹:

* Հոդվածը ներկայացվել է 24.12.19, գրախոսվել է 13.02.20, ընդունվել է դպագրության 04.12.20:

¹ Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան 2002, 167:

«Բազմավեպը»՝ հայկական հնագույն հանդես

Միհիթարյան նախորդ հրապարակությունները: «Բազմավեպը» որպես համահայկական բնույթի և բովանդակության պարբերական

Հայ ժողովողի պատմական ճակատագիրը իր խոր կնիքն է դրել նրա ողջ մշակույթի վրա: Դժիգ ճակատագրի եկմէջները դրոշմված են նաև հայ պարբերական մամուցի սկզբնավորման, ընթացքի, բնույթի և բովանդակության վրա: Քաղաքական անագորույն վիճակը, երկրի բռնի բաժանումը տարբեր հատվածների, գաղթօջախների առաջացումը տարաբնույթ պայմաններ են ստեղծել հայության քաղաքական, մշակութային և հոգևոր-բարոյական արժեքների ստեղծման համար: Այդ առումով և այդ կտրվածքով քննելիս բոլորովին էլ զարմանալի չէ, որ հայ առաջին պարբերականը՝ «Ազդարարը» և առաջին շարքում նաև «Բազմավեպը», հիմնադրվել են Հայաստանի և Հայկական լեռնաշխարհի սահմաններից դուրս: Հայ մամուցի պատմության անդաստանում հատկապես հիշատակելի են Միհիթարյան միաբանության ներդրումն ու ջանքերը: 1717 թ. սեպտեմբերին հայազգի մի խոմք հոգևորականներ Միհիթար վարդապետ Սեբաստացու առաջնորդությամբ իջևանեցին Խոյիայի Վենետիկ քաղաքից դեպի հարավ գտնվող Սուլբ Ղազար կղզում: Այդ կղզու անունը հետագայում պիտի նշանավոր դառնար հայ մատենագրության, գիտության և մշակույթի էջերում: Միհիթարյանները արդեն երեք դար շարունակ էական ավանդ են ներդրել հայ մշակույթի պատմության մեջ՝ հրապարակելով հայագիտական կարևոր նշանակություն ունեցող պատմական և պատմագիտական սկզբնադրուրներ, բառարաններ, լեզվագիտական, աշխարհագրական, պատմական ուսումնասիրություններ, անտիկ գրականության թարգմանություններ: Հիմնադրման առաջին իսկ տարիներից Միհիթարյան միաբանությունը հանդիսացել է հայագիտության և կրթական-մշակութային խոշոր կենտրոններից մեկը: Միաբանության կրթօջախներում ուսումնառություն են անցել հետազայի նշանավոր մի շարք գործիչներ՝ պատմաբան Միքայել Չամչյանը, բանաստեղծներ Մկրտիչ Պեղիկթաշյանն ու Դանիել Վարուժանը, պատմավիպասան Շերենցը, գրող, հրապարակախոս և հասարակական գործիչ Արփիար Արփիարյանը, հանրահոչակ դերասաններ Պետրոս Ադամյանն ու Վահրամ Փափազյանը և ուրիշներ: Միհիթարյան միաբանների մոտ հայոց լեզվին և հայ միջավայրին առնչվել են, ապա հայերենին տիրապետելու իրենց առաջին փորձերն է արել հանճարեղ բանաստեղծ Զորշ Գորդոն Բայրոնը: Օտարազգի շատ հեղինակներ բարձր են գնահատել Միհիթարյանների դերակատարությունը հայկական մշակույթի, գիտության և մամուցի զարգացման գործում:

Կարապետյան Ա.

Մխիթարյանները բարձր պահեցին նաև հայ մամովի անունն ու պատիվը: Նրանք մեկը մյուսի հետևից հրատարակեցին պարբերականներ, որոնք կոչված էին նոր մթնոլորտ ու նոր իրավիճակ ստեղծելու հայ գիտական մտքի և պարբերական մամովի անդաստանում: Հայ անդրանիկ պարբերականը կարճ կյանք ունեցավ: Նրա փակվելուց երեք տարի անց՝ 1799 թ. Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Ղոկաս Ինճիճյանը լուս է ընծայում «Տարեգրութիւն» անոնով պարբերականը՝ որպես «Յիշատակարան քաղաքական, պատերազմական, եկեղեցական և բանասիրական անցից և դիպուածոց աշխարհի»: Այն լուս տեսավ մինչև 1807 թվականը: «Տարեգրության» յուրաքանչյուր հատոր բարկացած էր 884 էջից: Բոլոր նյութերը շարադրված են արևմտահայ աշխարհաբար լեզվով: Յուրաքանչյուր հատորում տեղեկություններ էին հաղորդվում նախորդ տարվա ընթացքում աշխարհում տեղի ունեցած քաղաքական անցքերի, մշակութային կյանքում եղած նորությունների, առևտրական կապերի և հարակից այլ երևույթների մասին: Մխիթարյան հաջորդ հրատարակությունը նույնպես Վենետիկում լուս տեսած «Եղանակ Բիւզանդեան» ամսաթերթն է, որը 1803 թ.-ից հրատարակվում էր կրկին Ղոկաս Ինճիճյանի խմբագրությամբ: Այս պարբերականում ևս նյութերը շարադրված են աշխարհաբար յյուրամատչելի լեզվով: Յուրաքանչյուր հատոր բարկացած էր 288–300 էջից: Էջերը զարդարված են մանրանկարներով: Պարբերականում ավելի մեծ տեղ էր հատկացված հայոց բազմադարյան պատմության հարցերին, հատկապես հերոսական դրվագների նկարագրությանը, պատմական նշանավոր դեմքերի գործունեությանը: Այն գոյատևել է մինչև 1820 թվականը՝ շուրջ 17 տարի:

Մխիթարյան միաբանության երրորդ պարբերականը «Դիտակ Բիւզանդեան» երկշաբաթաթերթն է, որը լուս է տեսել 1812 թ. Վենետիկում, աշխարհաբար լեզվով: Նրա առաջին խմբագիրն է Եղել Գրիգոր վարդապետ Գապարաճյանը: Այնուհետև պարբերականը խմբագրել են Մադաթիա Ֆյուսկովյանը և Մանվել Զախօսախյանը: Թեև սույն պարբերականի լուս ընծայումն իրականացվեց Կ. Պոլտում իիմնադրված «Արշարունյաց ընկերության» նախաձեռնությամբ, սակայն նրա գաղափարական ու քաղաքական բովանդակությունը վերահսկվում էր Մխիթարյանների կողմից: «Դիտակ Բիւզանդեան» ուներ ամսագրին հատուկ ծավալ, բայց բովանդակությամբ լրագիր էր, քանի որ լուրեր ու տեղեկություններ էր հաղորդում օրվա անցուդարձի «քաղաքական ու պատերազմական, բանասիրական ու եկեղեցական դիպվաճների» վերաբերյալ: Պարբերականը ունեցել է հատուկ աշխատակիցներ, ովքեր պարզ ու

«Բազմավեպը»՝ հայկական հնագույն հանդես

հասկանալի լեզվով հոդվածներ և այլ նյութեր են գրել գիտական աշխարհում տեղի ունեցող նորությունների մասին: Այն անդրադառնում էր ինչպես անցյալին, այնպես էլ իր ժամանակի պատմաքաղաքական իրադարձություններին, սակայն դրանց նկատմամբ ցուցաբերում էր չափազանց զգուշավոր մոտեցում: «Դիտակ Բիլանդեանը» հրատարակվել է մինչև 1816 թվականը:

Մխիթարյան միաբանության հերթական պարբերականը 1843 թվականին լույս տեսած «Բազմավէպն» է, որն ինքնին նշանավոր է նաև նրանով, որ շարունակում է հարատևել մինչև օրս: Այն հանդես եկավ որպես օրագիր բնական, տնտեսական և բանասիրական գիտելեաց: Իսկ «Բազմավէպ» անունը հուշում էր, որ այն բազում բաներ վիպող է և բազմապիսի բաներ պատմող: «Բազմավէպի» առաջին խմբագիրը եղավ բազմափորձ և բանիմաց Գաբրիել Այվազովսկին, ով այդ պահին գտնվում էր ամենածաղկուն տարիքում՝ երեսունմեկ տարեկան հասակում և այդ ոչ հեշտ և շատ պատասխանատու պարտականությունները կատարեց ամենայն լրջմտությամբ՝ շուրջ վեց տարի: Իսկ խմբագրական խորհրդի անդամներն էին Ղևոնդ Ալիշանը և Հովհաննես Սորոկուճյանը:

«Բազմավէպ» հանդեսում հաճախակի էին փոխվում խմբագիրները: Բավական է նշել, որ 1843-ից մինչև 1880 թվականը այն ունեցել է տասներկու խմբագիր (Գ. Այվազովսկի 1843–1849), Ղևոնդ Ալիշան (1849–1851), Օքսիենտիոս Գուրգենյան (1852–1853), Գրիգոր Ճելայյան (1854–1856), այնուհետև 1858–1861 և 1863–1866), Հմայակ Պապիկյան (1856–1861), Ա. Սիռնիկ (1862–1866), Նորայր Բյուզանդացի (1867–1868), Ա. Գարթանյան (1868–1870), Հ. Իսավերտյանց (1871–1872), Կ. Իսկենտերյան (1873–1875), Ա. Սուֆրյան (1875–1876), Ա. Բասքանտիյան (1877–1882):

Խմբագիրների այդպիսի հաճախակի փոփոխությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ միաբանության պատասխանատուները զգաստ և մշտարթուն հետևում էին հանդեսի բովանդակությանը և որոշակի պահանջկություն ցուցաբերում: Այդ նշանակում էր, որ որևէ խմբագիր կամ աշխատակից իրավունք չուներ խախտելու միաբանության կանոնադրությամբ սահմանված օրենքներն ու չափանիշները և օտար տարրեր մտցնելու կրոնական դավանանքի վարդապետության մեջ:

«Բազմավէպը» ասպարեզ եղավ նախ և առաջ իր ժամանակի թելադրանքով: Այն լեզվական առումով ոյուրին և մատչելի հարթակ էր բացում հայ իրականության և աշխարհի իրականության զանազան ու բազմաբնույթ խնդիրները շոշափելու և այդ ամենը հայախոս զանգվածներին հասցնելու համար:

Կարապետյան Ա.

Իսկ XIX դարի կեսերն ու վերջերը իսկապես մի ցնցող ու արժեքային առումով հարակովիուս ժամանակաշրջան էր հին աշխարհամասի ժողովուրդների կյանքում: Հայ իրականությունը, այդ իրականության և միջավայրի մեջ ապրող հայ մարդն ու քաղաքացին չէր կարող երկար կտրված մնալ աշխարհում ընթացող քաղաքական, հոգևոր-բարոյական, տնտեսական, մշակութային գործընթացներից: Եվ այդ բանում նրան օգնում և զրավիգ էին «Բազմավեպը» և Մխիթարյան միաբանության հայրերի հրատարակած մյուս արժեքավոր գործերը:

«Բազմավեպի» խմբագիրներն ու գլխավոր աշխատակիցները եղել են ժամանակի ուսալ, զարգացած, կիրա ու առաջարեմ անհատները ոչ միայն հայկական իրականության, այլև Եվրոպական և համաշխարհային չափանիշներով: Նրանք քաջ հասկանում և պատկերացնում էին խնդիրների և հիմնահարցերի այն ամբողջ հրամայականը, որ ծառացած էր հայ ժողովրդի և հայ սերունդների առջև:

Չուշանալ, իետ չմնալ աշխարհում ընթացող գիտական, մշակութային, քաղաքական գործընթացներից, չմեկուսանալ սեփական միջավայրի պատերի ներսում՝ ահա այն կարգախոսն ու սկզբունքային մոտեցումը, որ առաջին իսկ համարներից որդեգրեցին «Բազմավեպի» խմբագիրներն ու Մխիթարյան միաբանության առաջնորդները: Այդ խնդիրները լուծելու համար հանդեսին անհրաժեշտ էր նախ և առաջ առաջնորդվել լեզվական նոր քաղաքականությամբ: Ահա այդ պատճառով և նպատակով է, որ «Բազմավեպը», ի տարբերություն ավելի վաղ հրատարակված Մխիթարյան միաբանության պարբերականների, որդեգրեց ոչ թե «ռամկախառն» աշխարհաբարը, այլ XIX դարի առաջին տասնամյակների արևմտահայ մտավորականության գործածած լեզուն, որը միայն նոր էր սկսել ծնավորվել որպես գրական լեզու և դեռ ճանապարհ ուներ անցնելու:

Սոհասարակ հանդեսը վարում էր լեզվական ճկուն քաղաքականություն, գտնելով, որ որոշ նյութեր նախընտրելի է հրապարակել գրաբարով (հատկապես բանաստեղծական քերթվածքները): Լեզվական այսպիսի «երկկենցաղությունը» ընկալելի և հասկանալի էր ժամանակակիցների կողմից: Հանդեսի էջերում թարգմանական գրականության ընտիր էջեր էին ներկայացվում, հակապես XIX դարակեսի ֆրանսիական գրականության հանճար Լամարթինի գործերը, որոնք այնքան մեծ ազդեցություն են գործել ժամանակի և հետագայի հայ բանաստեղծական մտքի փայլատակման վրա: Այս առումով տեղին է մեջբերել և դիտարկել հանդեսի անդրանիկ համարից հետևյալ իմաստավո-

«Բազմավեպ»՝ հայկական հնագույն հանդես

րումը. «Մեր բանասէրներուն յաճոյական բան մը ընել ուզելով, աս օրագրիս մէջ երեմն երբեմն ազգային մատենագրութենէն ի՛ զամ՝ կնայինք, որ հիմակուան օտար ազգաց մատենագրութեանը վրայ ալ խօսինք, ու մեր ատենի երևելի մատենագիրներուն գրուածներէն գէթ մանր ճաշակներ տանք՝ արձակ կամ ոտանաւոր թարգմանութեամբ: Այս անզամ հոս դրածնիս Լամարթինին գեղեցիկ ոտանաւորներէն մէկն է՝ ճիշդ թարգմանած»²:

Այնուհետև նշվում է, որ Լամարթինը այժմյան ողջ Եվրոպայի լավագույն ստեղծագործողն է, և իր գրվածքների երևելի հատկանիշներն են. «հաստատուն բարեպաշտութեան հոգի, փափուկ զգացմոնք, բարակ մտածողութիւն, և վառվրուն երևակայութիւն»³: Վերջում ասվում է, որ հաջորդ անգամներ «մէկաներուն ալ ճաշակը կոտանք»⁴: Ահա այսպես, սկսած անդրանիկ համարից, «Բազմավեպ» քայլ առ քայլ, համար առ համար դաստիարակում և կրթում էր հայ ընթերցողների միտքն ու հոգին, գեղագիտական ընտիր ճաշակ զարգացնում: Սկսած հատկապես առաջին խմբագիրներից, հանդեսի էջերում ծևավորվում, ամրապնդվում և հաստատակամ է դառնում ազգային ինքնության և հոգմոր հայրենիքի զգացողությունն ու հավատամքը: Հանդեսի առաջին տարին ամփոփելուց հետո, 1844 թվականի առաջին իսկ համարի առաջաբանում հետևյալ ուշագրավ դիտարկումն է. «Ուժի և գեղեցիկ դիտաւորութիւն, ամենայարմար միջոց, հաստատուն յոյս, անխոնչ աշխատութիւն, և ամենէն ավելի ճշմարիտ ազգասիրութիւն. ասոնք եղան «Բազմավեպին» առաջին տարուանը մէջ մեր առաջին քաջալերող եւ միսիթարող մտածութիւնները»⁵: Հիրավի նույնքան ազդեցիկ է սույնի շարունակությունը. «մարդու մը՝ իր ազգին լուաաւորութեանն ու յառաջդիմութեանը համար աշխատելէ աւելի գեղեցիկ ու վսեմ ի՞նչ դիտաւորութիւն կրնայ ըլլալ. Աս դիտաւորութեան հասնելու համար ուրիշ ի՞նչ յարմար միջոց կրնայ ըլլալ, բայց եթէ ընտանի եւ փոփոխական ու գուարճայի ոճով մը ոչ միայն դիլիմաց բաները սորուեցնել չգիտցողին, հապա նաեւ բարակ եւ խորունկ գիտելիքները մանրացուցով կամ դիտակով ցուցընելու մը պէս՝ պարզել, մեկնել, ու ամէնուն հասկըցուելու բաներ ընել. բարոյական խրատները ծարակի հոգոց յստակ ջրի պէս խմցընել. մարդկային խելքին գիտերն ու հնարքները իբրև հայիի մը մէջ ցուցընել»⁶:

² «Բազմավեպ», 1843, թիվ 1, էջ 16:

³ «Բազմավեպ», 1843, թիվ 1, էջ 16:

⁴ «Բազմավեպ», 1843, թիվ 1, էջ 16:

⁵ «Բազմավեպ», 1844, թիվ 2, էջ 3:

⁶ «Բազմավեպ», 1844, թիվ 2, էջ 3:

Կարապետյան Ա.

Իր գոյության այս 175 տարիների ընթացքում «Բազմավիշտ» հնարավորինս ամեն ինչով նպաստեց համայն հայության ազգային ինքնության ամրապնդմանն ու նրա հոգևոր էության հարստացմանը: Հայրենասիրության դասական ծևակերպումը, որն այնքան իմաստությամբ արել է հանդեսի մեծահոչակ խմբագիրներից Ռևոնդ Ալիշանը, շատ սերունդներ է կրթել ու տարել իր հետևից: «Ուր քաղաքացիք չիք՝ չկա և հայրենիք... բուն իսկ հայրենիք մեք եմք, անձն յուրաքանչիւր, և լաւութիւնք նեցուկը են նորա»⁷: Ալիշանյան կամ «Բազմավիշտ»-յան հայրենասիրությունը սահմանում էր սույն կարգն ու օրենքը. «Ճանաչել և պահել անվթար զսեփական շնորհս ազգիս, զլեզու նորա, զպատմութիւն նորա, զսովորութիւն և զախորժակս նորա անվնաս, զիարագատ դպրութիւն նորա և զփառս անուան նորա: Զայսպիսի կամիմ հայրենասիրութիւն»⁸:

«Բազմավիշտ» տասնամյակներ շարունակ մաքառեց իր լավագոյն խմբագիրների և աշխատակից-հոդվածագիրների ջանքերով՝ ստեղծելու օտար տիրակալությունների ներքո բաժան-բաժան եղած ու անպաշտպան մնացած հայ ազգի ինքնապաշտպանության հոգևոր համակարգը, ձգտելով նախ և առաջ վերարժնացնել նրան որպես ժողովուրդ՝ ազատ ու անկախ ապրելու և հենց այդպիսի հայրենիք ոնենալու նրա հիշողությունն ու բարոյակամային որակները:

Նախապես հաշվարկված ու մշակված գրական, գիտական ու մշակութային, լայնախոհ քաղաքականությամբ «Բազմավիշտ» իր էջերը հյուրընկալորեն բացեց հայ իրականության տարբեր շերտերն ու բնագավառները ներկայացնող մտավորականների առջև, որոնք ոչ միայն չին անդամակցում Միսիարյան միաբանությանը, այլև երբեմն համակիր ու անդամ էին հակընդդեմ որևէ այլ կրոնական և հասարակական կազմակերպության: Ամսագրի էջերը XIX դարի կեսերին բացվեցին նաև ստեղծագործող կին անհատների առջև, որը բացառիկ մի երևոյթ էր իր ժամանակի համար: 1861 թ. մարտին հանդեսի էջերում իրապարակվեց Սրբուհի Աստվածատությանի գրաբար երկարաշունչ մի բանաստեղծություն:

Տարեցտարի «Բազմավիշտ» էջերում իրապարակվում էին հայաշխարհի տարբեր հատվածները ներկայացնող հեղինակների գործերը (ինչպես արևմտահայ, այնպես էլ արևելահայ, ինչպես պոլսահայ, այնպես էլ թիֆլիսահայ և

⁷ «Բազմավիշտ», 1845, թիվ 22, էջ 343:

⁸ «Բազմավիշտ», 1848, թիվ 12, էջ 181:

«Բազմավեպը»՝ հայկական հնագույն հանդես

աշխարհի զանազան գաղթօջախներից): Դրանով իսկ հանդեսը տարածվում և հոգևոր-բարոյական առումներով արմատավորվում էր հայության բազմաբներ հատվածների շրջանում՝ դառնալով նրանց սեղանի հոկտ սպասելի պարբերականը: Դա մեծապես ոգևորում էր ու նոր լիցքեր հաղորդում հանդեսի պատասխանատուներին, որոնք արդեն 1870-ական թթ. պատվախնդրությամբ ազդարարում էին, որ իրենց ամսագիրը Ս. Ղազար կղզուց տարածվում է մինչև Ասիայի, Եվրոպայի և Աֆրիկայի հայահոծ ու հայաշատ գաղթօջախներ՝ Կ. Պոլս, Զմյուտնիա, Բաղդադ, Կահիրե, Կալկաթա, Լոնդոն, Փարիզ, Մուսկվա, Բաքու, Թիֆլիս և այլուր:

Ասել կուզի, որ «Բազմավեպը» մեկ կրոնական միաբանության օրգանից վերածվել էր ընդգծված ու շնչեղ համահայկական բնույթի և ուղղվածության հանդեսի:

Եվ ամենից կարևորն ու շեշտադրելին. «Բազմավեպը» տասնամյակներ շարունակ դարձել էր ոչ միայն հայ բազմաշերտ ընթերցողների հոգևոր սննդի մատակարարը, այլև մտավոր հասարակայնության հոգևոր, գիտական, բարոյական, մշակութային ոգորումները կազմակերպող, ընթացք և ուղղություն ցույց տվող ուժ կամ կենտրոն:

XX դարում «Բազմավեպը» շարունակում էր իր հայագիտական, և դրանով իսկ հայրենասիրական հատուկ ուղղվածությունն ու առաքելությունը՝ ասպարեզ տալով իր ժամանակի հայագիտական խոշոր դեմքերին: Հանդեսը կրկին հատուկ ուշադրություն էր դարձնում պատմաբանասիրական, աշխարհագրական և ժողովրդագրական թեմաներին: Այստեղ պետք է նշել, որ «Բազմավեպը» առհասարակ քիչ է շոշափել քաղաքական թեմաները, քիչ է անդրադարձել իրականության մեջ առկա սոցիալ-քաղաքական սուր խնդիրներին, որը առիթ է տվել ծայրահեղ մտայնության տեր որոշ գործիչների այն որակել որպես «Էկլեսիկ», այսինքն՝ բոլոր սկզբունքները խառնիխուռն միավորող և հասարակական երևույթներին իբր ոչ առաջադեմ դիրքերից մոտեցող պարբերականի: Մինչդեռ «Բազմավեպը» շարունակում էր հավատարիմ մնալ իր ուղեգծին, և դրանում էր նրա անքեկանելի մեծությունը, առաջատարությունն ու սկզբունքայնությունը՝ ծառայել միայն ու միայն հայագիտությանը՝ առանց որևէ քաղաքական համոզմունքի, համակրանքների կամ հակարանքների: Փոխարենը այս շրջանի «Բազմավեպին» հատուկ է հայերի մշակութային, հոգևոր-բարոյական կողմնորոշումներին նրբորեն արձագանքելը, Սփյուռքի և Հայաստանի կենտրոններում հայկական հինավորց քաղաքակրթության ավանդների ու ժառանգության պաշտպանությունը, մշակութային

Կարապետյան Ա.

տեղաշարժերի արտացոլումը մեր մտավոր կյանքի ոլորտներում մի կարևոր նպատակադրումով՝ նպաստել հայոց հոգևոր միասնության ու ներդաշնակությանը՝ հայագիտության անդաստանում և հայագիտության միջոցով:

«Բազմավիճակ» վերոնշյալ ժամանակաշրջանում տպագրել է հայրենիքի և Սփյուռքի բազմաթիվ հայագետների, ինչպես նաև օտարազգի ճանաչված հայագետ գիտնականների:

Հայաստանում խորհրդային իշխանության տարիներին «Բազմավիճակ» թեև որոշ հասկանալի սահմանափակումներով, այնուամենայնիվ, միշտ պահպանել է կապը հայրենիքի հետ և շարունակել իր էջերը ծառայեցնել հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդմանը՝ ընդհանուր ազգային-հայագիտական հենքի և ուղղվածության վրա:

Վերջին շրջանում, այնուամենայնիվ, հանդեսը հավանաբար աշխարհաքաղաքական կտրուկ փոփոխությունների բերումով ստիպված է արտահայտել իր որոշակի վերաբերմունքը վերոնշյալ քաղաքական իրողությունների և զարգացումների վերաբերյալ՝ այդ նպատակով ընտրելով հատուկ ժանր, կամ ավելի շուտ, իին ժանրի նորովի օգտագործումը, որը կոչվում է խմբագրական: Չուսակ և համառոտ, բայց և շատ արտահայտիչ այդ խմբագրականներում խտացված շատ բան է ասվում, թեև բացառապես բարոյախոսական շրջանակներում: Այսպես, խմբագրականներ են տպագրվել գլոբալիզացիայի, գեներային ծայրահեղությունների, հասարակության մեջ մտավոր բևեռացումների, անհանդուրժողականության և իր իսկ բնութագրումով՝ «ամէն ինչ ամէն բանի դէմ և ամէն ոք ամէն ինչի դէմ» իրողությունների կամ սկզբունքների դատափետմանը, որոնք «Բազմավեպի» խորին համոզումով՝ «մեր արդիական ոստին են»⁹:

Վերջին շրջանում՝ ավելացվել են նոր խորագրեր բնութագրեր և ուսումնասիրություններ, հաղորդումներ, նշումներ, վիճարկումներ:

2012–2017 թթ. հանդեսը տպագրվում է տարեկան երեք կամ չորս անգամ, ընդ որում հաճախ միացյալ թվահամարներով, որը ինչ-որ տեղ մատնում է նյութականի զգացնել տվյալ կարիքը հրատարակիչների մոտ:

Այդ առողմով տեղին է հիշեցնել <<նոր իշխանություններին, որ կարելի և պետք է հատուկ ուշադրություն դարձնել հայկական հնագույն սույն հանդեսի նյութական կողմի ամրապնդմանը:

⁹ «Բազմավիճակ», 2013, թիվ 1–2, էջ 9:

«Բազմավեալը»՝ հայկական հնագույն հանդես

Հայ ամենաերկարակյաց հանդեսին ցանկանում և մաղթում ենք Երկար ու հարատև Երթ, այնքան Երկար ու հարատև, որքան Երկար հարատևելու է հայագիտությունը՝ իր անբաժան ու մշտական ուղեկցի՝ «Բազմավէպի» հետ:

Եզրակացություն

«Բազմավէպի» հանդեսը այսօր հանդիսանում է բազմադարյան հայ լրագրության արժանավոր նահապետը: Այն ամենատարեցն է հտալիայում լուս տեսնող պարբերականների մեջ և չորրորդը՝ աշխարհի հնագույն հանդեսների շարքում: Հանդեսի 150-ից ավելի տարեհատորները հայ մշակույթի և գրականության մնայուն էշերից են, որտեղ «ամփոփված են գիտնականների շատ սերունդների հայագիտական հունձքն ու վաստակը: Առանձնահատուկ են հատկապես «Բացառիկ»-ները՝ նվիրված հայ և համաշխարհային մշակույթի, պատմության նշանակալի իրադարձություններին և ականավոր անհատների հիբեյաններին¹⁰: Պետք է նշել, որ մեծապես «անգնահատելի են հանդեսի ծառայությունները Եվրոպական միտքն ու գաղափարները հայոց կյանք ներբերելու ասպարեզում: Մյուս կողմից՝ «Բազմավէպում» օտար լեզուներով տպագրված հայագիտական հոդվածները Եվրոպացիներին ծանոթացնում են մեր ազգի անցյալն ու նրա մշակույթը: Հանդեսին աշխատակցել և իրենց գործուն նպաստն են բերել Ղ. Ալիշանը, Է. Հյուրմյուզյանը, Գ. Զարբիանայանը, Վ. Հացումին, Ա. Ղազիկյանը, Է. Տիլան, Բ. Սարգսյանը, Ֆեդերիկ Ֆեյդին, Ե. Փեշիկյանը, Կ. Քիպարյանը, Ջ. Ֆրասոնը, Ն. Տեր-Ներսիսյանը, Ս. Ճեմճեմյանը, Լևոն Զեքիյանը և ուրիշներ¹¹:

Հանդեսի մանկավարժական և բարոյախոսական հիմնահարցերը ուսումնասիրող հայ հետազոտողը իրավացիորեն կատարում է սույն դիտարկումը. «Սակայն աչքի է զարնում մի նպատակ. «Բազմավէպը» կրթելու է հայ հասարակությանը»¹²:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Դոլուխանյան Ռ. 2015, Մանկավարժական և բարոյախոսական դասերը. «Բազմավեալ», Երևան, էջ 18:

Հայ սփյուռք հանրագիտարան 2003, Երևան, 732 էջ:

Քիրստոնյա Հայաստան հանրագիտարան 2002, Երևան, 1076 էջ:

¹⁰ Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան 2002, 168:

¹¹ Հայ Սփյուռք հանրագիտարան 2003, 233:

¹² Դոլուխանյան Ռ. 2015, 18:

Կարապետյան Ա.

«Բազմավեպ», 1843, թիվ 1, էջ 16, 1841, թիվ 2, էջ 3, 1845, թիվ 22, էջ 343, 1848, թիվ 12, էջ 181, 2013, թիվ 1-2, էջ 9:

«БАЗМАВЕП» – СТАРЕЙШИЙ АРМЯНСКИЙ ЖУРНАЛ

КАРАПЕТЯН А.

Резюме

Ключевые слова: монастырь Святого Лазаря, Габриэл Айвазовский, Гевонд Алишан, редакторы «Базмавепа», конгрегация мхитаристов, публикация мхитаристов, духовная родина.

Одним из важнейших периодических изданий Конгрегации мхитаристов был журнал «Базмавеп», первый номер которого вышел в 1843 г. в Венеции. Примечательно, что «Базмавеп» издается по сей день. Редакторы журнала – Габриэл Айвазовский, Гевонд Алишан, Огсентиос Гургенян, Григор Джелалян и др. были образованными и передовыми людьми своей эпохи. Журнал способствовал укреплению чувства национального самосознания, став рупором научных, нравственных и культурных устремлений армянской интеллигенции.

“BAZMAVEP” – AN ANCIENT ARMENIAN JOURNAL

KARAPETYAN A.

Summary

Key words: Lazarus Monastery, Gabriel Aivazovsky, Alishan Ghevont, Editos of “Bazmavep”, Mekhitarist Congregation, Mekhitarist publications, spiritual homeland.

One of the most significant periodicals of the Mekhitarist Congregation was the journal “Bazmavep”. The first issue of the journal was published in 1843, in Venice. It is noteworthy that the journal is still being published. The editors of the journal Gabriel Ayvasovski, Ghevond Alishan, Ogsentios Gurgenian, Grigor Chelalian were the educated frontrunners of the epoch. Becoming the mouthpiece of the Armenian intelligentsia, the journal contributed to the strengthening of national consciousness.